ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ Ի ՍՊԱՆԻԱ

Ես Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոս Եզնկայի, ի սուրբ Կիրակոսու յանապատէն ի Նորգեղա–գեղէն։

Ի վաղուց հետեւ փափաքէի ի սուրբ գլխաւոր առաքելոցն գերեզմանին տեսանելոյ. և յորժամ հասեալ ինձ անարժանս արժանաւորիլ տեսլեան նոցա և հանապազ սիրոս փափաքէր, բայց ումեք ոչ կարէի յայտնել զխորհուրդ սրտի իմում. թվին ԹՃԼԸ (= 1489) հոկտեմբերի քսանեւինն յելայ ես ի իմ վանացն և եկայ մեղաբար հասնի ի Յստամպօլ և Աստուծոյ յաջողութեամբ գտեալ նաւ մի և մտի անդ Վրբ-թանես սարկաւարգովն թվին ՋԼԹ (1490) յուլիսի մեռասան ի Յստամպօլու ելաք և մտաք ի նաւ մի ֆրանգի. և հոկտեմբերի մի ելաք ի Վենեժ քաղաքն որ է Վենետիք մեծ և փառաւոր քաղաք և ինքն է ի մէջ ծովու շինած. ՀԴՌ տուն է խիստ փառաւոր և հարուստ քաղաք է. և մեծ եկեղեցի կայ ի մէջ քաղաքին որ ԺՌ մարդ կու մտնէ ի մէջն և խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս յաւետարանիչն եկեղեցին է և երկու երգէհոն կայ ի մէջն և երկու թեւաւոր ոսկի առիւծ է շինած ի մէջն. և այլ շատ եկեղեցիք կայ ի քաղաքն և շատ վանորայք կայ ի բոլոր քաղաքին. ամէն մէջ ծով է շինած։ Եւ մեծ մաւիտան մի կայ առաջեւ եկեղեցին սուրբ Մարկոսի. ի դրանն շատ ի վեր չորս դեղին պղնձէ ձի մի շինած և կանգնեցուցած մեծ մեծ և զմի մի ոտվին ի վեր են կալել. և ի հարաւային կողմ ծովու դեհն հանց ծախողներն է. և երկու մեծ սիւն է կանկնեցուցած. մէկին վրայ թեւաւոր առիւծ մի և մէկալին սուրբ Գէորգ է կանգնել է. և թագաւորին դարպասին պարիսպն ամէնն յոսկով զարդարած, և այլ ազգի ազգի շատ բաներ. ով կարէ պատմել զքաղաքին զարդէկութիւն, և կեցաք 29 օր։

Եւ մտաք ի նաւն և գնացաք ի ԺԳ աւրն Յանքոնիայ և անտից հասաք ի 8 օր աստուածապահ մեծն ի Հռոմ ուր սուրբ և փառաւորեալ ամենայգովելի սուրբ մարմինք են սուրբ գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. և գնացաք և երկիր պագեցաք և մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ և մեր ծնողացն, և մեր երախտաւորացն և կեցաք անդ 5 ամիս. և զամենայն տնօրինական տեղիսն տեսաք. զի է սուրբ առաքելոց նշխարքն ի Հռոմ քաքաքէն ի դուրսն ի հիւսիսային կողմն յարեւմտից դիէն փոքրիկ քաղաք մի հետ հրով քաղաքին գետն երկու միջնովն կ'անցնի որ կոչի Սանդանկելաւ[1]. սուրբ առաքելոց եկեղեցոյն դուռն յարեւելք է. հինգ բարձր և ահեղ դուռն ունի և միջի դուռն թափցու է մուֆրախ. և մէկ փեղկն սուրբ Պօղոս է, և միւսն սուրբ Պետրոս։ Եւ ի Հռոմայ յարեւմտից դեհն ի Ներոն թագաւորին դարպասին դիմաց՝ Պետրոսին խաչելութեան տեղն է[2]. և ի մէջ քաղաքին իւրեանց զնտանին տեղն է[3]. և ի Հռոմայ ի դուրս շատ մի հեռու սուրբն Պօղոսի գլխատման տեղն է[4] և ի հարաւոյ դիհն որ գայ ի մօտ քաղաքին, այն տեղն է ուր Քրիստոս հանդիպեցաւ սուրբ Պետրոսի[5]. և ի քաղաքն եզը Սան Ճուվան[6] եկեղեցին է որ երկուսին գլուխն ի հոն է ամբողջ մարմնով, և ի քաղաքին մէջն ի հարաւոյ դիհն Գրիգոր Ակռանդացոյն զնտան է, եկեղեցի է հիմայ և այլ առաջի մէջ քաղաքին Սանթէլինակայն? եկեղեցին Ճ սրբոց